**Արձանագրություն N 2**

ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար ձմեռային անվադողերի ձեռքբերման նպատակով կազմակերպված
ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-24/31 ծածկագրով գնման ընթացակարգի
/այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

11 սեպտեմբերի 2024թ.
ք. Երևան, Բաղրամյան 19 ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամներ՝ Վ.Թորոսյան, Գ.Հարությունյան, Հ.Հարությունյան, Ա.Լալայան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Սաղաթելյան

### 1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված գնման գների վերաբերյալ

| ***Չափաբաժնի համարը*** | ***Չափաբաժնի անվանումը*** | ***Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ)*** |
|---|---|---|
| 1 | ավտոմեքենաների անիվներ | 264000 |
| 2 | ավտոմեքենաների անիվներ | 400000 |
| 3 | ավտոմեքենաների անիվներ | 104000 |

### 2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 09.09.2024թ.-ին ժամը 10:00-ին:

Էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 10.09.2024թ.-ին ժամը 10:00-ին:

### 3. Հայտ ներկայացրած մասնակցի տվյալները՝ անվանումը, գործունեության հասցեն, կապի միջոցը, էլ.հասցեն

| Հ/հ | Մասնակցի անվանումը | Գործունեության հասցեն | Էլ. հասցե | Կապի միջոցներ |
|---|---|---|---|---|
| 1 | «Արպանիվ» ՍՊԸ | ք. Երևան, Նար-Դոս 122 | automaxtender@mail.ru | +37491205624 |

### 4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-24/31 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

### 5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների, հրավերում կատարված փոփոխության մասին

Հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել: Հրավերի փոփոխություն չի կատարվել:

### *6.Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ*

Գնառաջարկներ

| Չ/հ | Զբաղեցրած տեղ | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին |
| 1 | 1 | «Արպանիվ» ՍՊԸ | 264000 | 218513 | 20 % | 262215.6 | 218513 | 20 % | 262215.60 |
| 2 | 1 | «Արպանիվ» ՍՊԸ | 400000 | 331846 | 20 % | 398215.2 | 331846 | 20 % | 398215.20 |
| 3 | 1 | «Արպանիվ» ՍՊԸ | 104000 | 85923 | 20 % | 103107.6 | 85923 | 20 % | 103107.60 |

Աճուրդն ամփոփվել է 10.09.2024 թվականին: Ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից Համակարգի կողմից համարվել է «Արպանիվ» ՍՊԸ-ն:

### *7. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ /հայտում առկա փաստաթղթեր, ինչպես նաև Համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և նիստը կասեցնելու մասին*

Հանձնաժողովն ուսումնասիրելով eauction.armeps.am համակարգի կողմից առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Արպանիվ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը /հայտում առկա փաստաթղթեր, ինչպես նաև Համակարգ մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր/, արձանագրեց՝

- **«Արպանիվ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացրած հայտում առկա են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես՝

- eauction.armeps.am համակարգ մուտքագրված /լրացված/ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում՝ 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժնում «Արտադրող» սյունակները ենթակա են շտկման՝ անհրաժեշտ է նաև նշել ապրանքն արտադրող կազմակերպության կազմակերպաիրավական ձևը: 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժնում «բեռնվածության ինդեքսը», «երաշխիքային ժամկետը» հատկանիշներում՝ ապրանքի նկարագրում առկա է «առնվազն» բնութագրիչը, մինչդեռ անհրաժեշտ է հստակ նշել առաջարկվող ապրանքի հատկանիշները: 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժնում «Ապրանքային նշանը» սյունակներում առկա տեղեկատվությունը անհրաժեշտ է նշել ամբողջական:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով, Հանձնաժողովը որոշեց 11.09.2024թ. նիստը կասեցնել՝ Համակարգի միջոցով ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Արպանիվ» ՍՊԸ-ին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում Համակարգի միջոցով շտկել անհամապատասխանությունները:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝0:*

### *8. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին*

Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել 13.09.2024թ. ժամը 10:00-ին, ք. Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 19 հասցեում:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ________ Վարդան Հարությունյան

անդամներ՝ ________ Վարդան Թորոսյան

________ Գարիկ Հարությունյան

________ Հրայր Հարությունյան

________ Անժելա Լալայան

քարտուղար՝ ________ Հերմինե Սաղաթելյան